## ՈՉ ՄԵԿ ՈՉ ՄԵԿԻՍ ԴՐԱԾՈՆ ՉԷ, ԲՈԼՈՐՍ ԷԼ ՄՐՑԱԿԻՑՆԵՐ ԵՆՔ. ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆ

12.09.2013 18:31

«Ես նման անլուրջ հարցերի չեմ անդրադառնում: Այդ իսկ պատճառով էլ չեմ պատասխանել Տիգրան Աթանեսյանի բարձրացրած հարցին»,- այսօր Փաստաբանների պալատի թեկնածուների բանավեճ- քննարկման ժամանակ ասաց Կրոմվել Գրիգորյանը՝ պատասխանելով մասնակիցներից մեկի այն հարցին, թե ինքը Արա Ջոհրաբյանի դրածոն է:

«Գուցե ես էլ նման կարծիք հայտնեմ Տիգրան Աթանեսյանի մասին, քանի որ այսօր ներկա չէ քննարկմանը: Նրա նման հայտարարության պատճառը երևի այն հանգամանքն է, որ ես իր նման վիրավորանքներ չեմ հասցնում Արա Ջոհրաբյանի հասցեին»:

Առաջադրված հարցին անդրադարձավ նաև Արա Ջոհրաբյանը. «Պարոն Գրիգորյանի հանդեպ ես մեծ հարգանք ունեմ: Ոչ մեկ ոչ մեկիս դրածոն չէ, բոլորս էլ մրցակիցներ ենք»:

Աղբյուրը՝
http://iravaban.net/2013/09/12/%D5%B8%D5%B9-%D5%B4%D5%A5%D5%AF-%D5%B8%D5%B9-%D5%B4%D5%A5%D5%AF%D5%AB%D5%BD-%D5%A4%D6%80%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B-%D5%B9%D5%A7-%D5%A2%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BD-%D5%A7%D5-AC-%D5%B4%D6%80%D6%81/

Վերադառնալ
```
$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```